
ԴՐԱԽՏԻ ԳԵՏԵՐԻ ԵՎ ԽԱՎԻԼԱ, ՔՈՒՇ ԵՐԿՐՆԵՐԻ
ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ըստ Աստվածաշնչի, Դրախտի չորս գետերը՝ Փիսոնը, Գեհոնը, Տիգրիսը և Եփրատը, բխում էին միևնույն ակունքից՝ ներկայացնելով եդեմական գետի 4 ճյուղերը¹: Հայտնի փաստ է՝ Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքները գտնվում են Հայաստանում (Հայկական լեռնաշխարհում), իսկ Փիսոնի և Գեհոնի տեղադրության վերաբերյալ գոյություն ունեն հակասական կարծիքներ: Նախապես Գեհոնի ոռոգած Քուշ երկիրը նույնացնում էին Եթովպիայի հետ (ինչն արտացոլված է, օրինակ, Աստվածաշնչի անգլերեն թարգմանության և հայերեն աշխարհաբար նոր թարգմանության մեջ)² և, ըստ այդմ, Գեհոնը նույնացվում էր Նեղոսի հետ, իսկ Փիսոնը՝ որոնվում Հնդկաստանում: Ավելի հազվադեպ Փիսոնն էր համարվում եթովպական-եգիպտական գետ, իսկ Գեհոնը՝ տեղադրվում Հնդկաստանում:

«Աշխարհացոյցում» Եգիպտոսի նկարագրության մեջ կարդում ենք. «...եւ գետս ունի զՆեղոս, որ է Գեհոն»³: Անանիա Շիրակացու մեկ այլ աշխատության մեջ հանդիպում ենք այսպիսի մի նախադասության. «Հինդոս՝ որ է Փիսովն. Նիդոս՝ որ է Գիհովն»⁴: Գեհոն//Նեղոս նույնացումն առկա է նաև միջնադարյան «Բառգիրք հայոցում». «Գեհոն – որ է Ջեհոն, կամ Նիլոս, կամ Նեղոս գետ»⁵, իսկ Փիսոնի՝ Հնդկաստանում կամ նրան մերձ շրջանում տեղադրված լինելու վերաբերյալ կարդում ենք. «Փիսոն – որ է Գանգէս, կամ Ինդոս, կամ Վեհոտոս»⁶: Միջնադարյան մատյաններից մեկում, ընդհակառակը, ոչ թե Գեհոնը, այլ Փիսոնն է համարվում եթովպական գետ: Այնտեղ ասված է. «Հերիկն (ծաղիկ է)՝ յԵթովպիայ, գտանի յեզր Փիսոն գետոյն»⁷: Այս դեպքում Գեհոնն է դառնում հնդկական գետ, իսկ նրա ոռոգած Քուշ երկիրը նույնացվում է «Քուշանների երկրի» հետ⁸: Բայց Քուշը չէր կարող լինել «Քուշանների երկիրը»՝ նախ վերջինիս Հայկական լեռնաշխարհից (Տիգրիսի և Եփրատի վերին հո-

¹ Ծնն., Բ, 11-15:

² Աստուածաշունչ մատյան Հին և Նոր կտակարանների, հրատարակություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի աստուածաշնչային ընկերության, Էջմիածին, 2001:

³ Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 344:

⁴ Նույն տեղում, էջ 364:

⁵ Բառգիրք հայոց (այսուհետև՝ ԲՀ), քննական բնագիրք, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամայանի, Երևան, 1975, էջ 64:

⁶ ԲՀ, էջ 326:

⁷ Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 124:

⁸ Ջ. Կ ո ս ի դ ո վ ո կ ի. Բիրլիական ավանդապատումներ, Երևան, 1970, էջ 22:

սանքներից) ունեցած մեծ հեռավորության պատճառով, ապա նաև այն պարզ պատճառով, որ քուշանները Հին Կտակարանում հիշատակվել չէին կարող, քանի որ մ. թ. ա. I – մ. թ. I դարերում էին պատմական ասպարեզ իջել: Գեհոն գետի ոռոգած Քուշ երկիրը չէր կարող լինել նաև պատմական Եթովպիան, որը նույնքան մեծ հեռավորության վրա էր գտնվում Հայկական լեռնաշխարհից, որքան և Հնդկաստանը կամ այն մասնակիորեն ներառած «Քուշանների երկիրը»:

Դրախտը հարավային Միջագետքում տեղադրելու ջանքերի արդյունքում Փիսոն և Գեհոն գետերի՝ միջագետքյան տեղադրության հիմնավորման փորձեր ևս արվել են: Այդպիսի փորձերի «գիտական» հիմնավորումը հանգեցրել է նրան, որ նախամայր գետից բխած և Եփրատի ու Տիգրիսի զուգրնկեր երկու այդ գետերը «հայտնվել» են հարավային Միջագետքում և «վերածվել» Եփրատից ճյուղավորված երկու ջրանցքների, իսկ Քուշը նույնացվել է կասիտական Kassu-ի կամ Պարսից ծոցի հյուսիսարևելյան անկյունում տեղադրվող Kasdim-ի հետ⁹: Եթե Աստվածաշունչը Դրախտի չորս գետերը համարում է ճյուղավորված մեկ գետից, ապա պետք է առանց վերապահության ընդունել, որ այդ գետերի ակունքներն իրար մոտ են եղել, չորսն էլ սկիզբ են առել Հայաստանում (Հայկական լեռնաշխարհում)՝ Առաջավոր Ասիայի գլխավոր գետերի ջրբաժանում: Այս տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության է արժանի Աստվածաշունչի երբայերեն բնագրում Եդեմի գետին՝ չորս գետերի նախամորը, սրված nagar անվանումը, որը նշանակում է ոչ միայն «մեծ գետ», «մեծ ջրավազան», այլև՝ «օվկիանոս» և «Եփրատ գետը»¹⁰:

Մեր կարծիքով, nagar հասկացության հետ սերտորեն կապված է սեմական աշխարհում Հայկական լեռնաշխարհի համար կիրառված Nairi երկրանունը: Այն, սովորաբար, բխեցնում են արքայերեն nāru «գետ» բառից և առնչում հյուսիսմիջագետքյան Naharina երկրանվանը¹¹: Ն. Ադոնցը մերժում է Nairi երկրանվանը սեմական ծագում վերագրող տեսակետը՝ գրելով. «Ասորեստանցիները գործածել են Ուրարտու և Նաիրի տերմինները, բայց դրանից դեռևս չի բխում, որ սրանք ասուրական, այսինքն՝ սեմական ծագում ունեն»¹²: Իսկ մեր կարծիքով, Nairi-ն հնդեվրոպական ծագում ունի՝ բաղկացած Na-ir-i բաղադրիչներից: Դրանցից առաջինի համար հմմտ. հ.-ե. *snā - «հոսել, հեղուկ» արմատը (որից հայ. նայ «թաց, խոնավ», նայացուցանել «թրջել, ջրել, ոռոգել»¹³), երկրորդի համար հմմտ. -er մակբայակերտ վերջածանցը (կիրառված երկու

⁹ Комментарий на все книги Св. Писания Ветхого и Нового Завета (այսուհետև՝ Комментарий), Второе издание, Стокгольм, 1987, с. 19, ком. 12; с. 20, ком. 13.

¹⁰ Там же, с. 19, ком. 11.

¹¹ Я. А. М а н а н д я н. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 24; В. И. А в д и е в. История древнего Востока. Л., 1953, с. 458.

¹² Ն. Ա դ ո ն չ. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 269:

¹³ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Երևան, 1977, էջ 426:

հակադիր հասկացություններ նշող բառեր կազմելիս¹⁴. այս դեպքում՝ «խոնավ» Հայաստանը՝ ի հակադրումն «չոր» Միջագետքի, իսկ երրորդի համար հմնտ. ածականներ և ածականացված գոյականներ կերտող և որպես տեղանվանակերտ կիրառված -iia վերջածանցը՝ առկա իտեթական և հայկական տեղանուններում¹⁵ (հմնտ. Այլի, Անի, Կումայրի, Մարի, որոնցում -ի < -iia//սեպ. -ia):

Դրախտային Փիսոն և Գեհոն գետերը Հայաստանում տեղադրելու փորձեր ևս արվել են. այս դեպքում առաջինը նույնացվել է Արաքսի ստորին հոսանքի¹⁶ կամ Կուրի հետ¹⁷: Բայց Արաքսի հետ նույնացվել է նաև Գեհոնը, որի վերաբերյալ արքիմանդրիտ Նիկիֆորի «Աստվածաշնչային հանրագիտարանում» կարդում ենք. «Դրախտի երկրորդ գետը (Գեհոնը – Ս. Պ.), որը հոսում է Եդեմից և ոռոգում Քուշ երկիրը: Ենթադրում են, որ դա Կասպից ծովը թափվող ներկայիս Արաքս գետն է... Ուրիշներն էլ մտածում են, որ դա ներկայիս Օքսոս գետն է՝ արաբներից այսօր էլ կոչված Գիհոն (Ջիհան, Ջայհան, ներկայիս Ամու-Դարյան – Ս. Պ.): Ոմանք էլ ուզում են այստեղ տեսնել Վերին Նեղոսը, Բնդոսը կամ Գանգեսը, Շատ էլ-Արաբի արևելյան հունը: Բայց որոշակի մեկնաբանություն այդ գետի հոսելու վայրի վերաբերյալ գոյություն չունի»¹⁸: Գրեթե 115 տարի է անցել այս տողերի հրատարակումից, իսկ վիճակը դարձյալ մնում է նույնը: Փիսոն և Գեհոն գետանունների մեջ, սովորաբար փորձել են գտնել սեմական բառեր կամ արմատներ: Օրինակ, ի նչ արժեն «Բառգիրք հայոցում» բերված հետևյալ բացատրությունները. «Փիսոն – փոխաբերելի, կամ բերան հրոյ, կամ բերանոյ փոփոխումն», «Գեհոն – եղջիր ցլոյ, կամ սելով, կամ լանջք, կամ բերանոյ յափտենից, կամ շնորհ»¹⁹: Նույն բնույթի են նաև հետևյալ «գիտական» ստուգաբանությունները. Փիսոն՝ «ջրառաս», «գետահուն, ջրանցք, ջրանցքահուն», «ջրի առատություն», Գեհոն՝ «ուժգին, սաստիկ, սրընթաց (դեռևս ոչ լրիվ ճշգրիտ)»²⁰:

Կարծում ենք, որ դրախտային Փիսոն ու Գեհոն գետերի և դրանց ոռոգած երկրների տեղադրության ու անունների ստուգաբանության հարցերը պետք է դիտարկվեն՝ ուղեցույց ունենալով հետևյալ հանգամանքները. ա) Դրախտի մյուս երկու գետերի՝ Եփրատի և Տիգրիսի նման Փիսոնը և Գեհոնը պետք է լինեն Հայկական լեռնաշխարհի գետեր, բ) ըստ այդմ, դրանք կարող են կրել այնպիսի անուններ, որոնց ստուգաբանության հարցում էլակետային է դառնում հնդեվրոպական ծագման հնարավորությունը, գ) ստեղծված լինելով խոր հնա-

¹⁴ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան, 1957, էջ 110:

¹⁵ Գ. Բ. Դ շ ա ո կ յ ա ն. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964, с. 30-32, 57-60; ն ո լ յ ի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Երևան, 1987, էջ 231:

¹⁶ Քարտեզը տե՛ս Ա. Մ ո վ ո ի ո յ ա ն. Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանն Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2004, էջ 12:

¹⁷ Библейская энциклопедия (այսուհետև՝ ԲԵ), Труд и издание Архимандрита Никифора. М., 1891, Второе издание, М., 1990, с. 735.

¹⁸ ԲԵ, с. 163.

¹⁹ ԲԶ, էջ 64, 326:

²⁰ Комментарий, с. 19, ком. 12; ԲԵ, с. 163.

դարում, դրանք կարող են լինել տոտեմական պաշտամունքի դրսևորումները (Ադամը նախնառաջ անվանակոչել էր ոչ թե բնության երևույթները, այլ շնչավոր էակներից անասուններին, թռչուններին և գազաններին)²¹, դ) ըստ այդմ, «կենդանական» ստուգաբանությամբ այդ գետանունները կարող էին ծագել ոչ թե մեկուսի, այլ զույգ-զույգ՝ մեր հեռավոր նախնիներին բնորոշ առասպելաբանական մտածողության երկհալադրամիասնական համակարգի արդյունքը լինելով²²:

Փիսուն և Գեհոն գետանունների վերջնամասը՝ -ոն, ցույց է տալիս, որ դրանցում *փիս-ը և *գեհ-ը արմատներ են, իսկ -ոն-ը՝ վերջածանց, որը, մեր կարծիքով, նույնական է հ.-ե. *-on (>հայ. -ն) վերջածանցի հետ: Այս վերջածանցն իր տարբերակներով հնդեվրոպական նախալեզվում կազմում էր ածականներ՝ գերազանցապես գոյականացած, և սովորական է կենդանիների՝ հնդեվրոպական ծագումով անուններում²³: Հայերենում դրանով կազմված շատ գոյականներ և կենդանիների անուններ կան. առն, եզն, եղն, ծիծառն²⁴ և այլն: Փիսուն < *Փիս-ոն գետանվան *փիս- բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, նույնական է հետագա Փոքր Հայքի հյուսիս-արևելքում խեթական արձանագրությունների հիշատակած Pisu լեռնանվան հետ: Անվանակիր լեռը գտնվում էր Գայլ գետի վերնագավառը բռնած Թումանա երկրում²⁵: Նրա և Փիսոն գետի անվանակցությունը կարծես հուշում է Գայլ գետի և Փիսոնի նույնության հնարավորությունը:

Ուշադրություն դարձնենք նաև հետևյալ հանգամանքի վրա. Գայլ գետը Բրիս գետի ամենամեծ վտակն է, իսկ Իրիսի մյուս մեծ վտակը փոքրասիական Սկյուլաքս գետն է (այժմ՝ Չեքերեք)²⁶: Σκόλα□ գետանունը²⁷ հունարեն է և նշանակում է «շուն, շնիկ»²⁸: Գայլ գետն էլ հին հույները կոչում էին Λύκος, այսինքն՝ դարձյալ «գայլ»²⁹: Կարծում ենք, որ նույնպիսի «գայլ-շուն» ստուգաբանական շարքին պատկանող աշխարհագրական անվանումներ են նաև Փիսուն-ը և Pisu-ն: Հնդեվրոպական նախալեզվում «գայլ» և «շուն» նշանակած հա-

²¹ Ծնն., Բ, 20:

²² Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն. «Եղջերավոր-գիշատիչ» հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը նաիրյան մի քանի տեղանուններում. – Հայ ժողովրդական մշակույթ, Հանրապետական գիտական նստաշրջան, IX, գեկուցումների հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1997, էջ 48-49, ն ու յ ն ի՝ Արջի և եղջերվի հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը հնագույն Շիրակի տեղանուններում. – Շիրակի պատմա-մշակութային ժառանգությունը հանրապետական երկրորդ գիտաժողովի գեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 45-46:

²³ В. В. И в а н о в. Реконструкция индоевропейских слов и текстов, отражающих культ волка. – “Известия АН СССР, серия литературы и языка”, т. 34, 1 5, М., 1975, с. 400.

²⁴ ՀԼՊԸԺ, էջ 238:

²⁵ В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи (այսուհետև՝ ВПХИ). Ереван, 1971, с. 72-73, 74-75.

²⁶ Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Երևան, 1963, էջ 81:

²⁷ S t r a b o, XII, 3,15.

²⁸ Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, с. 1486.

²⁹ Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 1039.

մապատասխան արմատը՝ «շուն» նշանակությամբ, պահպանված է միայն սլավոնական լեզուներում. հմմտ. ռուս. пёс, լեհ. pies և այլն³⁰: Փխոն գետանվան մեջ ֆիս արմատը «գայլ» պետք է նշանակի, որովհետև այն կրած գետը, հավանաբար, Գայլ//Λύκος-ն է, իսկ «շուն» նշանակող բառերի հիմնական մասը նախապես նշում էր գայլին և մյուս շնագզի գիշատիչներին: Հմմտ. ազգակից լեզուների հետևյալ նույնարմատ բառերը. իւեթ. ulippana, գոթ. wulfs «գայլ», ավեստ. urupi «շուն», raopi «աղվես, շնագայլ», լատին. lupus «գայլ», սոլթես «աղվես», լիտվ. lāpė «աղվես», իսկ իմաստի փոփոխման տեսանկյունից հմմտ. հին հնդկ. śvaka «գայլ», բայց մար. σπάκκα «շուն»³¹:

Շան (ավելի ճիշտ նրա վայրի նախնու) գազանների կարգին պատկանելու մասին է խոսում այն հանգամանքը ևս, որ հայերեն կորին բառը կիրառվել է գազանների ձագերից բացի, շան ձագը նշելու համար ևս³². հմմտ. նաև «Շնապի-կորին»³³: Այս միևնույն երևույթի հետևանքն է շներոց-գելերոց արտահայտությունը, որը պետք է եկած լինի դեռևս այն հեռավոր ժամանակներից, երբ գայլի և շան միջև հակադրում չկար: Դրա հետևանքն են նաև գրեթե նույնական հասկացություններ նշող գայլ-պառավ-ը, շանկծիկ-ը և շնգլխիկ-ը: Առասպելաբանության ոլորտին պատկանող այս բառերից առաջինը նշանակում է «երևակայական չար էակ, որ ալքերի նման խեղդում է նորածին երեխաներին»³⁴, իսկ երկրորդը և երրորդը նշանակում են «չար պառավ, կախարդ պառավ»³⁵: Շնակերպ-գայլակերպ ոգիների առթիվ ուշագրավ դիտողություն ունի Ս. Հարությունյանը: «Ալալոց-գալալոցում,– գրում է նա,– ըստ երևույթին, թաքնված են երկու չար ոգիների՝ ալի և գայլի (որոշ բարբառներում՝ գալ) անունները՝ համանման շներոց-գելերոց, սատանոց-դիվոց դարձվածքների»³⁶:

Փխոն գետանվան և անվանակիր գետին սկիզբ տված լեռան Pisu անվան՝ «գայլ/շուն» առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանելու օգտին կարող են վկայել նույն և կից տարածքից հայտնի նույնիմաստ աշխարհագրական անվանումները: Գայլ գետի ավազանում խեթական արձանագ-

³⁰ М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Т. III, М., 1971, с. 248; Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ). Т. II, Тбилиси, 1984, с. 536, пр. 1.

³¹ Wörterbuch Sanskrit-Deutsch, von prof. Dr. Dr. habil. Klaus Mylius, VEB Verlag Enzyklopädie, Leipzig, 1980, S. 494; ИЯИ, т. II, с. 492, 494, 513, 590-591.

³² Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. I, Երևան, 1979, էջ 1119, ՀԱԲ, հ. II, Երևան, 1973, էջ 648:

³³ ԲՀ, էջ 250: Ի դեպ, Սշո բարբառում գազան բառը «շատ անգամ գործածվում է «շուն» իմաստով» (ՀԱԲ, հ. I, Երևան, 1971, էջ 498), իսկ Արցախում կեզան (<գազան) նշանակում է «բորենի» (նույն տեղում):

³⁴ Ս տ. Մ ա լ ի ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. I, Երևան, 1944, էջ 411:

³⁵ ՀԲԲ, հ. III, Երևան, 1944, էջ 499, 523:

³⁶ Ս. Հ ա թ ո թ յ ո լ յ ա ն. Գայլի հնագույն պաշտամունքի արտացոլումները հայոց «գելկապի» աղոթքներում.– ՀՀ 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, ՀՀ ԳԱԱ ՀԱԲ գեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 45:

բույությունները հիշատակում են Kuntija անունով լեռը³⁷, իսկ նրա ավագանին հարող Արևելապոնտական լեռնաշղթայի մի ճյուղը Ստրաբոնը կոչում է Σκυδίσος³⁸: Մեր կարծիքով, այս լեռնանուններն ուղղակի կապի մեջ են հայերեն սկունդ «շուն, շնիկ» և բարբառային կոնդիկ (<*կոնդ-իկ) «փոքր շուն, շնիկ» բառերի հետ: Հ.-ե. *k uont- նախաձևից ծագած մեր բառերի արմատակիցներից են գոթ. *hunds*, հրգ. *hunt* «շուն», անգլ. *hound* «որսաշուն», լատիշ. *santana* «գամփո» բառերը³⁹: Հայերեն բառերից սկունդ-ին հարում է Σκυδίσος (<*skud-, *skund-), իսկ կոնդիկ-ին Kuntija (<*kunt- և -ija տեղանվանակերտ) լեռնանունը: Pisu լեռնանվան նման Փիսոն գետանվան տեղական-հայկական (ոչ թե աստվածաշնչային-սեմական) ծագման օգտին կարող է վկայել հայերեն բարբառային փսօն//փսոն (<*փիսոն) բառը, որը նշանակում է «այն ծակը, որտեղից դուրս է ցայտում ջրադաշտի ջուրը»⁴⁰: Փիսոն գետի դեպքում այդ «ծակը»՝ ակունքը, գտնվելու էր Pisu լեռան վրա:

Հայկական լեռնաշխարհում կային ոչ միայն շուն-գայլ առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանող, այլև՝ «այծ-ոչխար» (ընդհանրապես՝ «եղջերավոր») առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանող գետանուններ: Ընդ որում, պետք է նկատի առնել, որ տոտեմական ծագումով գետանունները հաճախ նույնական կամ իմաստակից են լինում իրենց ակունք տվող լեռների անուններին: Այդպիսիներից ենք համարում նաև խեթական արձանագրություններից հայտնի Elurija լեռան (որը տեղադրվում է հետագայի Դոմանայի շրջակայքում)⁴¹ անունը և այժմյան Լոռի անունը, որը կրում է Ճորոխի ձախակողմյան վտակը (հմմտ. Լոռ-ի և Elur-ija, որտեղ -ija-ն հ.-ե. ծագումով հիշյալ տեղանվանակերտ վերջածանցն է՝ հայերեն -ի վերջածանցի ծագումնաբանական համարժեքը): Այս լեռնանվան *Elur- հիմքը բաղկացած է *el- և *ur- արմատներից, որոնցից առաջինն ածանցյալ ձևով առկա է հայ. եղև «էգ եղջերու», հուն. ἔλλδος «եղնիկ, եղնիկի հորթ», լիտվ. *e'lnis* «հյուսիսային եղջերու», *e'lnė* «եղնիկ», ռուս. *елень/олень* «եղջերու», կիմր. *elain* «եղնիկ» և այլ բառերում⁴²: Երկրորդ արմատը *ur-, կարճ ձևն է հ.-ե. *uer- արմատի, որից են հին հնդկ. *vṛ-*, «ջուր», ավեստ. *vairi-* «ծով», այբան. *hurdhē* «ջրաբար, ջրավազան», հին իսլ. *vari* «ջուր» և այլն⁴³: Այս դեպքում, պետք է ընդունել, որ Ճորոխի այս վտակի և նրան սկիզբ տված լեռան անունները «եղջերավոր» ստուգաբանական շարքին են պատկանում:

Մեր կարծիքով, մինևույն «եղջերավոր» առասպելաբանական-ստուգաբանական շարքին են պատկանում ոչ միայն Ճորոխի այս վտակի, այլև մայր գետի հին ու նոր անունները: Դրանցից առաջինը Գեհոն գետանունն է: Հիմքեր

³⁷ ВПХИ, с. 69-71.

³⁸ S t r a b o, XI, 2, 15; XI, 14, 1; XII, 3, 18.

³⁹ ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 230-231:

⁴⁰ ՀԲԲ, հ. IV, Երևան, 1945, էջ 530:

⁴¹ ВПХИ, с. 72, 74-75.

⁴² ՀԱԲ, հ. II, էջ 21:

⁴³ Wörterbuch Sanskrit-Deutsch, S. 432; ИЯИ, т. II, с. 882; Г. Б. Д ж а у к я н. Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков. Ереван, 1967, с. 48.

ունենք Փիսոնի նման Գեհոնը ևս տեղադրելու Հայկական լեռնաշխարհում, իսկ ավագանը՝ նրա ոռոգած Քուշ երկիրը, Փիսոն//Գայլ գետի ավագանի հարևանությամբ: Փիս-ոն և Գեհ-ոն գետանունների վերջին բաղադրիչները նույնական են կենդանիների անուններում հաճախակի հանդիպող հ.-ե. *-ոն-վերջածանցի հետ (>հայ. -ն. հմմտ. գառն, եզն, եղն, ձուկն, մուկն և այլն): Ուրեմն, Գեհ-ոն գետանվան *գեհ արմատը ևս կենդանու անուն կարող է լինել: Մենք այն նույնական ենք համարում հայերեն, բայց դեռևս չստուգաբանված, գեհ «ոչխարների հոտ» բառի հետ, որի *գի հ տարբերակն է ընկած բարբառային գիուկ (<*գի-ուկ) «ոչխարների փարախ»⁴⁴ բառի հիմքում:

Ճորոխի աստվածաշնչյան անվան «եղջերավոր» ստուգաբանությունը հնարավոր է դարձնում նույնպիսի մոտեցումը՝ նրա Ճորոխ անվան նկատմամբ: Ճոր-ոխ բաղադրիչների տրոհվող գետանվան երկրորդ բաղադրիչն «ակն, ակունք» է նշանակել, որովհետև նույնական է ոխ «քեն, վրեժ» բառի հետ: Վերջինիս հիմքում է *օk^u - «տեսնել, այք» արմատն է, որից է սերում նաև ակն «այք, ջրի այք, աղբյուրի բխած տեղը» բառը⁴⁵: Ճոր արմատին հանդիպում ենք նաև տկճոր (<*տիկ-ճոր) բառում, որի առաջին բաղադրիչը հ.-ե. *dig- «այծ» արմատից ծագած տիկ բառն է (հմմտ. հուն. - լակոն. δίζα «այծ», հրգ. ziga «այծ», անգլ.-սաքս. ticcen «ուլ, այծիկ»)՝⁴⁶: Տկճոր բառը, հավանաբար, ստեղծվել է այն բանից հետո, երբ տիկ-ը գործածվում էր արդեն ոչ թե «այծի տիկ» մասնավոր, այլ «տիկ» ընդհանրական նշանակությամբ, ուստի «այծի տիկ» հասկանալու համար հարկ է եղել տիկ-ին հավելել *ճոր «այծ» բառը: Վերջինիս երբեմնի գոյության վկայությունն է նրա բարբառային ճուռ (<*ճուր-ն) տարբերակը, որը նշանակում է «այծի մի տեսակ, որ տալիս է նուրբ և փափուկ մազ»⁴⁷:

«Եղջերավոր» ստուգաբանական շարքին պատկանող գետանուններն արդյունքն են «եղջերավոր կենդանի»/«գետ» առասպելաբանական զուգորդումների, որոնք առկա են ինչպես հայ, այնպես էլ հնդեվրոպական մյուս ժողովուրդների ավանդույթներում: Ցայտուն է հետևյալ օրինակը. «Սասնա ծռերի» Բաթմանա Բուղան Բաթման գետի (Տիգրիսի վտակի) անձնավորյալ ոգին, նախապես ցլակերպ է ընկալվել, որովհետև նրա անունը «Բաթմանա ցուլ»/«Բաթման գետի ցուլ» է նշանակում: Ի դեպ, Բաթման գետը հին Քաղիթթն է (հմմտ. քաղ՝ «արու այծ»), որը սկիզբ է առնում Հայկական Տավրոս (Տաւրոս// հուն.

⁴⁴ ՆՀԲ, հ. I, էջ 534, ՀԱԲ, հ. I, էջ 532:

⁴⁵ Г. Б. Джаякян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 122, 271; ՀԱԲ, հ. I, էջ 106-107, ՀԼՊՆԺ, էջ 51: Ոխ «ակունք» բառից է, ըստ երևույթին, ծագում հեքիաթներում ակունքների տիրակալ համարվող ոգու Օխայ <Ոխ-այ անունը (վերջածանցի համար հմմտ. արքայ, մօրայ, յօրայ և այլն): «Ակունք» նշանակող ոխ և ակն բառերի միջանկյալ օղակն է ներկայացնում *ախ բառը՝ առկա Օանախ (Օանախոյ ձոր), Անձախ (Անձախի ձոր) և Ախուրեան գետանուններում (Ս. Պ է տրոսյան, Օ. Պ է տրոսյան, Լ. Պ է տրոսյան. «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում. - ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, I, Գյումրի, 1998, էջ 77, 79):

⁴⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 405:

⁴⁷ ՀԲԲ, հ. III, 224:

Ταῦρος «Ցուլ») լեռնաշղթայից, և որին հին հայերը հենց Ցուլ էին կոչում⁴⁸: Հիշենք նաև հունական առասպելաբանության մեջ Հերակլեսի հակառակորդ մարդացուլ Աքելոյոսին՝ նույնանուն գետի ոգուն⁴⁹:

Գեհոն և Ճորոխ գետանունները, «եղջերավոր» առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանելով, «եղջերավոր անասուն»/«գիշատիչ գազան» առասպելաբանական հակադրության դրական անդամն են եղել: Կից ավագաններով Ճորոխ և Գայլ գետերի հակադրման պատճառը պայմանավորված է եղել դրանց աշխարհագրական դիրքով: Հայաստանի հյուսիսի այս գետերի դիրքը միմյանց նկատմամբ հակադիր է՝ Ճորոխն արևելյան գետ է, իսկ Գայլը՝ արևմտյան: Արևելք/արևմուտք (լուսավոր/խավար) առասպելաբանական հակադրումը եղջերավոր անասունի (մասնավորապես՝ այծի, այծյամի, ոչխարի) և գիշատիչ գազանի (մասնավորապես՝ գայլի) իրական հակադրության զուգահեռն է: Աշխարհագրական անվանումներում իր արտացոլումը գտած այդպիսի հակադրման բազմիցս հանդիպում ենք ժողովրդական հեքիաթներում: Դրանցում գայլն ու խոյր (գայլն ու գառը, գայլն ու ոչխարը) պահպաններն են Անմահական խնձորի, Ոսկե (մշտավառ, անմար) ճրագի, Հագարան Բլբուլի և այլն: Մի հեքիաթում ճգնավորը խորհուրդ է տալիս Հագարան Բլբուլի համար աշխարհի ծայրը հասած երիտասարդին. «Պրակ կընցնես կը տիսնաս մեյ դեհ գել կապուկ, մեյ դեհ գառն. գելու առջև խոտ, գառու առջև միս. պիտի վերցնես միս դնես գելու առջև, խոտը՝ գառու առջև: Կընցնես կերթաս, կը հասնես ճոչ դուռ մը, մեկ փեղկը փակ, մեկ փեղկը բաց. փակ փեղկը պիտի բանաս, բացը՝ փակես»⁵⁰: Այս և նույնաբնույթ այլ հեքիաթների համապատասխան դրվագների և համեմատական առասպելաբանության զուգահեռ տվյալների համադրումից պարզվում է, որ գայլն առնչվում է դռան ձախ փեղկին (արևմտյան կողմ, խավար, բացասական), իսկ գառը՝ աջ փեղկին (արևելյան կողմ, լուսավոր, դրական):

«Գիշատիչ գազան»/«եղջերավոր անասուն» հակադրությունն առկա է նաև Գայլ և Ճորոխ գետերի ավագանները հյուսիսից եզերող Արևելապոնտական լեռնաշղթայի տարբեր հատվածների անունների միջև: Ստրաբոնը գրում է, որ Մեծ Կովկաս լեռնաշղթան, «հասնելով Հայաստանին, միանում է Մոսքիկյան և Կողքիսի լեռներին՝ մինչև Տիբարանիների կոչված երկիրը, արևմուտքից գտնվում են այս տիրարանի ժողովուրդը և Պարիադրես լեռը և Սկյուդիսես լեռը՝ մինչև Փոքր Հայք և Եփրատի հովիտը...»⁵¹: Սկյուդիսես/Σκυδιος լեռնանվան «գայլ-շուն» առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանելու վերաբերյալ խոսք եղավ վերևում, իսկ նա արևմտյան դիրք ուներ Արևելապոնտական լեռնաշղթայի այն հատվածի նկատմամբ, որը Ստրաբոնը կոչում

⁴⁸ «Աշխարհացոյց», էջ 89, Բ ու Վ ա ն դ, Գ, ժդ:

⁴⁹ I l s e B e c h e r. Acheloo, Lexikon der Antike. Leipzig, 1985, S. 10; А. А. Т а х о - Г о д и. Ахелой. – “Мифологический словарь”. М., 1991, с. 75; Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 279.

⁵⁰ Գ. Մ ր վ ա ն ձ ա յ ա ն ց. Երկեր, հ. I, էջ 216:

⁵¹ S t r a b o, XI, 14, 1 (Մ տ ր ա բ ո ն ն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 53):

է Մոսքիկյան լեռ //Մոսչիկա՛օրդ⁵²: Այս վերջին անունը ծանոթ է նաև «Աշխարհացոյցի» հեղինակին, որը Պոնտոս երկիրը տեղորոշում է «առ ի ծովուն ցՄոսքական լեռունս, որ բաժանեն ընդ նա եւ ընդ Մեծ Հայս»⁵³: Ինչպես տեսնում ենք, Սկյուդիսեսը հյուսիսից եզերում է Գայլ գետի ավազանը (Փոքր Հայքում), իսկ Մոսքիկյան//Մոսքական լեռները՝ Ճորոխի ավազանը (Մեծ Հայքում): Մոսչիկա լեռնանվան հիմքում դժվար չէ տեսնել հունարեն *μóσχος* «ցլիկ, հորթուկ, մոզի, երինջ» բառը, մանավանդ, որ հին հայերն Արևելապոնտական լեռնաշղթայի այս հատվածը կոչում էին Պարխար լեռին⁵⁴: Այս լեռնանվան հիմք պարխ-ը պախրայ բառի պախր հիմքի տարբերակն է (մեկը մյուսի դրափոխված ձևն է): Պախրայ նշանակում է «տավար, արջառ, նախիր», բարբառներում նաև՝ «եզ», «եղջերու»⁵⁵: Այս եղջերավոր անասունի անունն էր կրում նաև Արևմտյան Եփրատի ձախ ափին գտնվող Պախր//Պախրայ կոչված լեռը (այժմ՝ Բաղրփաշա)⁵⁶:

Շատերին կարող է տարօրինակ թվալ դրախտային հիշյալ անունների «կենդանական» ստուգաբանությունները: Բայց պետք է հիշել, որ դրանք, ստեղծված լինելով վաղ հնադարում, մեր հեռավոր նախնիների առասպելաբանական մտածողությանը բնորոշ տոտեմական պաշտամունքների արդյունքն են: Ընդ որում, Դրախտի՝ «կենդանական» ստուգաբանությամբ հիշյալ տեղանունները (աշխարհագրական անվանումները) առաջացել են ոչ թե մեկուսի, այլ փոխկապակցության մեջ՝ մեր հեռավոր նախնիների կողմից աշխարհի բոլոր երևույթների երկհակադրամիասնական ընկալման համաձայն: Ջարմանայի չէ, որ այդ նույն ճանապարհով և նույնպիսի փոխկապակցության մեջ են ստեղծվել նաև Դրախտի մյուս երկու գետերի՝ Տիգրիսի և Եփրատի հին անունները:

Տիգրիսի հին անունը շումերական արձանագրություններում բերված է DIGNA(T) տեսքով, որից՝ աքքադերեն Diglat, արամեա-ասորական Degla⁵⁷, իսկ վերջիններից էլ՝ հայերեն Դկլաթ, Դկղաթ ձևը⁵⁸: Հունարեն Τίγρις/Τίγρις ձևի (որից՝ լատին. Tigris) առաջացումը իրանական նախաձևից Հ. Հյուբշմանը բացատրում է հետևյալ կերպ. «Պարսիկները Diglat ձևն ըրած են Digrā... հենելով այլևայլ բառերու վրա, գ. օր. *tigrī (=ավեստ. تیγρι) «նետ»՝ ըրած են վերջապես Tigrā»⁵⁹: Գետանվան սեմական ձևերը գալիս են շումերերեն Digna(t)-ից, բայց վերջինս շումերական ծագում չունի: Նրա առաջին՝ dig-, բաղադրիչի հիմքում կարելի է տեսնել

⁵² Strabo, XI, 2, 15; XI, 12, 4; XI, 14, 1; XII, 3, 18.

⁵³ «Աշխարհացոյց», էջ 100, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 347:

⁵⁴ «Աշխարհացոյց», էջ 110:

⁵⁵ ՀԱԲ, հ. IV, էջ 7:

⁵⁶ Արիստակես Լաստիկյան, «Աշխարհացոյց», էջ 76, 99:

⁵⁷ Հ. Հյուբշման. Հին հայոց տեղայն անունները, թարգմ. Հ. Բ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1901, էջ 335:

⁵⁸ «Աշխարհացոյց», էջ 86, 107, 114:

⁵⁹ Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 335:

h.-ե. *dig- «այծ» (>հայ. տիկ)⁶⁰ բառը: Երկրորդ բաղադրիչը՝ -nat// -lat, մեր կարծիքով, հ.-ե. *(s)nō-t- (<*snā- «հոսել, հեղուկ») բառից ծագած մի ձև է. 1-ով և n-ով արտացոլումների համար հմնտ. լախուր//նեխուր, լապաստակ//նապաստակ, լերբան//ներբան միևնույն բառերի զույգ տարբերակները⁶¹: Հ.-ե. *snā- արմատի (և նրա ածականներով ձևերի) ժառանգներից են՝ հայ. նայ «թաց, խոնավ» (>նայացուցանել «թրջել, ջրել, ոռոգել»), հին հնդկ. snati «լողանալ, լվալ, լվացվել», ավեստ. sna «լվալ», snayeite «լողանալ», հուն. νόω «հոսել», νομα «հոսուն ջուր, ակունք», լատին. natāre «լողալ», իռլ. snaudh «գետ» և այլ⁶²: Այսպիսի ստուգաբանությամբ Տիգրիսի հին Digna(t)>Diglat անունը համալրում է Հայկական լեռնաշխարհի հնդեվրոպական ծագումով գետանունների շարքը: Այն նշանակում է «Այծի գետ»:

Մեր հեռավոր նախնիների տոտեմական պաշտամունքներում ևս իր ազդեցությունը թողած կենդանական աշխարհի երկհակադրամիասնական ընկալումը ենթադրում է «այծային» Տիգրիսի հետ հակադրամիասնական զույգ կազմած գետի «գիշատիչ գազան» առասպելաբանական-ստուգաբանական շարքին պատկանող անուն կրելու հնարավորությունը: Իսկ այդպիսին համարվել է Եփրատը (Արևմտյան Եփրատը)՝ Հայկական լեռնաշխարհում Տիգրիսի նկատմամբ արևմտյան (և հյուսիսարևմտյան) դիրք ունենալու պատճառով (հյուսիսը և արևմուտքը՝ որպես աշխարհի խավար կողմեր, համադրվում էին գիշատիչ գազանի հետ): Այս տեսանկյունից է հասկանալի դառնում, թե ինչու արքադական «Էնումա էլիշ» պոեմում Տիգրիսը համարվում է բխած՝ Մարդուկի սպանած նախաստեղծ էակ Թիամաթի աջ աչքից, իսկ Եփրատը՝ ձախ աչքից⁶³: Այս առթիվ դարձյալ հիշենք, որ ակն բառը ոչ միայն «աչք» է նշանակում, այլև «ակունք, ջրի աչք» (ինչպես է նաև ուրիշ մի շարք լեզուներում), ապա՝ նկատի առնենք, որ առասպելաբանական մտածողությամբ «ձախ»-ի իմաստաբանական շարքին են պատկանում «բացասական» երևույթները, իսկ «աչք»-ի՝ դրանց հետ հակադրամիասնության մեջ գտնվող «դրական» երևույթները: Եփրատի՝ Արևմտյան Եփրատի, առթիվ ուշագրավ է հայկական հետևյալ ավանդությունը. «Եփրատը մի ոգի է կնոջ կերպարանքով՝ ծածկված քուրծերով և ունի խոիվ մազեր: Ամեն տարի նա բազմաթիվ մարդկանց է կուլ տալիս: Երբ գալիս է Վարդավառը, ոգի-ջրահարսը նայելով դիմացի ժայռին, ասում է. Վարդևորն եկավ, մեկը չեկավ...»⁶⁴: Տոտեմական պաշտամունքի վաղնջական հեռավոր դարերում Եփրատի անձնավորում մարդակեր այս ոգին գազանակերպ պետք է պատկերացվեր: Մեր կարծիքով, գազանակերպ այդ ոգու իրական նախատիպը եղել է բորենին, որի անունն էլ վաղնջական ժամանակներում կրել է Եփրատ (Արևմտյան Եփրատ) գետը:

⁶⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 405:

⁶¹ ՀԱԲ, հ. II, էջ 259, հ. III, էջ 428, 445:

⁶² ՀԱԲ, հ. III, էջ 426:

⁶³ Я открою тебе сокровенное слово. Литература Вавилонии и Ассирии. М., 1981, с. 287.

⁶⁴ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 89:

*Բորենու հայերեն անունը՝ բորենի, բորեան, բորայ, բորե, ծագում է հ.-ե. *bhero- «գորշ, թուխ» արմատից, որն ազգակից լեզուներում կիրառվել է կենդանիների անուններ ստեղծելիս. հմմտ. հին հնդկ. bhalla, հրգ. bero, գերմ. Bär, անգլ. bear, «արջ», ավեստ. bawra/bawri, «կուղբ», հուն. φρόνη/φρόνος «դողդոջ» և այլն⁶⁵: Հ. Աճառյանը նշում է, որ «հայերենի մեջ պահված է bhero- արմատաձևը»⁶⁶: Վերջինս ընկած է Եփրատի շումերական BURANUN/BURUNUN և արքադական Purantu/Purattu անունների հիմքում: Մրանցից էլ առաջացել է խուռ. Puranti, յեթ. Puratti/Puranti/Puruna/Puran(a), ուրարտ. սեպ. Puranadi, հուն. Ευφρότης, հայ. Եփրատ և գետանվան այլ ձևերը, որոնք, հակառակ տարածում գտած կարծիքի⁶⁷, չեն կարող ծագած լինել արքադերեն puratu «լայն» բառից: Շումերերեն urudu<*burudu «պղինձ» բառի գոյությունը հիմք է սվել Եփրատի գետանունն ստուգաբանել շումերերենով՝ որպես գետ, որով ստանում էին կամ ձուլում «պղնձահանքը»⁶⁸: Վ. Ջիհանյանն այսպիսի ստուգաբանության դեմ բերում է հետևյալ առարկումները. «Նախ շումերները (նաև նախաշումերները) պղինձը ներմուծում էին Հայկական լեռնաշխարհից (Միջագետքում պղնձի հանքեր չեն եղել, և տեղաբնիկներին պղինձը անծանոթ էր), ուստի առարկայի հետ մեկտեղ նրանք պետք է ներմուծեին (փոխ առնեին) նաև անունը... Երկրորդ՝ գետանվան հնագույն շում. Buranun/Burunun ձևերը տարբերվում են նախաշում. *burudu-ից n~d հարաբերությամբ»⁶⁹: Վ. Ջիհանյանն իրավացի է ինչպես իր առարկումների մեջ, այնպես էլ այն դեպքում, երբ Եփրատի շումերական և արքադական անուններին վերագրում է հնդեվրոպական ծագում, սակայն, կարծում ենք, որ հ.-ե. *per- «այն կողմն անցնել» արմատը (թեկուզն՝ «սահման» նշանակությամբ) այստեղ գործ չունի:*

*Շումերերենով ավանդված Buranun/Burunun գետանվան մեջ կարելի է առանձնացնել bura-/*bora- կամ buru-/*boro- և nun-/*nunu բաղադրիչները: Եթե դրանցից առաջինն առնչվում է «բորենի» նշանակող հայերեն բառերի արմատին, ապա երկրորդի մեջ կարելի է տեսնել մեր մանկական թոթովանքի նունու «խմելիք, ջուր, գինի և այլն»⁷⁰ բառը, որը հ.-ե. «հոսել, թացություն» նշանակող *sneu- արմատի⁷¹ կարճ *snu տարբերակից է (կրկնությամբ. նու-նու >նու-նու): Այս դեպքում, Եփրատի հնագույն Buranun/Burunun անունը պետք է նշանակի «Բորենու ջուր, Բորենու գետ» և լինի «Այծի գետ»/Տիգրիսի հետ կազմած հակադրամիասնական գույզի «բացասական» անդամը:*

⁶⁵ Wörterbuch Sanskrit-Deutsch, S. 337; ՀԱԲ, հ. I, էջ 477, ИЯИ, т. II, с. 498; В. Н. Т о п о р о в. Прусский язык. Словарь, А-Д, М., 1975, с. 203-204.

⁶⁶ ՀԱԲ, հ. I, էջ 477:

⁶⁷ W o l f g a n g S c h i n d l e r. Euphrat. – “Lexikon der Antike”, S. 164.

⁶⁸ ИЯИ, т. II, с. 712.

⁶⁹ Վ. Ջիհանյան. Հայկական լեռնաշխարհի ջրանունները. – Հայոց լեզվի պատմության հարցեր, III, Երևան, 1991, էջ 245, ծան. 48:

⁷⁰ ՀԲԲ, հ. III, էջ 484:

⁷¹ Г. Б. Д ж а у к я н. Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, с. 149.

Ըստ Աստվածաշնչի, Փիսուն գետը «նա է, որ պատկ զամենայն երկիրն Եւիլատայ, անդ ուր ոսկին է, եւ ոսկի երկրին այնորիկ ազնիւ. եւ անդ է սուտակն եւ ակն դահանակ»⁷²: Աստվածաշնչային Եվիլատ երկիրը երբայերեն կոչվում է Xavilā: Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում այս երկրանվան և հայերեն «Խաւիղ- դրախտ, կամ բուրաստան»⁷³ բառի միջև առկա լեզվաբանական և իմաստաբանական սերտ կապը: Հայերեն բառը հնարավոր չէ փոխառյալ համարել երբայերենից հետևյալ պատճառներով. ա) Աստվածաշնչային երկրանունը հայերին ծանոթ է Եւիլայ/Եւիլատ ձևով, իսկ սրանք հեռու են թե՛ Խաւիղից, թե՛ Xavilā-ից: բ) Խեթական արձանագրություններից հայտնի դարձած և Գայլ գետի ավազանին վերաբերող Խավիլիյա (Haviliia) տեղանունը⁷⁴, պարունակելով նույն Խաւիղ հիմքը, հուշում է սրա ոչ սեմական ծագումը: գ) Ինչպես հայերեն Խաւիղ բառը, այնպես էլ նրա ծագումնաբանական երկվորյակ Haviliia տեղանունը հնդեվրոպական կազմություն ունեն՝ բաղկացած Խաւ արմատից, հ.-ե. -il-/-իղ և (միայն վերջինը) -iia վերջածանցներից: դ) Հայերեն Խաւիղ բառը «դրախտ»-ից բացի նշանակում է նաև «բուրաստան, պարտեզ, բոստան»⁷⁵ որոնք ավելի նախնական են, քան «դրախտ»-ը (հմմտ. դրախտ «Ադամի պարտեզը, Եդեն», «երկնային արքայություն», բայց նաև՝ «ծառանոց, պարտեզ» < իրան. draxt «ծառ»):

Այս ամենը երբայական տեղանվան մեջ ենթադրում է հայերեն Խաւիղ//havil բառի առկայությունը: Ըստ այդմ, մերժելի են ոչ միայն Փիսունի ոռոգած Xavilā-ն քամյան ցեղի երկիր համարող և Եգիպտոսում տեղադրող, այլև այն Պարսից ծոցին մերձ «ավազուտ երկիր» Ard-el-Xavilot կամ Xalot կոչված սեմական երկրի հետ նույնացնող տեսակետները⁷⁶: Հասկանալի է, որ դա արվել է աստվածաշնչային Եդենը (Edem) ստորին Միջագետքում տեղադրելու և հարավբարելոնյան gan-idim-ի հետ նույնացնելու համար⁷⁷: Մերժելի է նաև Xavilā-ի մեջ, Վրաստանի տարածքը տեղադրելու մասին առաջադրված տեսակետը, որի հիմքը Խավիլիայի ոսկու մասին ակնարկ է⁷⁸: Ինչպես հայտնի է, Վրաստանը նշանավոր ոսկու հանքեր չունի, իսկ Գայլ գետի ավազանին հարող հայկական շրջաններում կան: Դրանք նույնիսկ շահագրգռել էին Ալեքսանդր Մակեդոնացուն: Այս առթիվ Մտրաբոնը գրում է. «Կան ոսկու հանքեր Միսպիրիտիսի մեջ՝ Կաբալայում, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից գործով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից»⁷⁹: Այս մեջբերումը թարգմանած ձևով Աճառյանը ծանոթագրում է. «Միսպիրիտիս (Σοσπιρίτις), գավառ հին Հայաստանում»:

⁷² Ծնն., Բ, 11-12:

⁷³ ԲՀ, էջ 142:

⁷⁴ ВПХИ, с. 68, 72-73.

⁷⁵ ՀԱԲ, հ. II, Երևան, 1973, էջ 353:

⁷⁶ Комментарий, с. 19, ком. 12.

⁷⁷ Комментарий, с. 20, ком. 14.

⁷⁸ БЭ, с. 735.

⁷⁹ Strabo, XI, 14,9.

տանի, որ է Սպեր (այժմ Բսպիր)»⁸⁰: Հ. Աճառյանն իրավացի է: Իսկապես, խոսքը Ճորոխի ավազանում գտնվող նահանգի և ոչ թե Հայկական Տավրոսում գտնվող Շուպրիա //Šubria-ի մասին է⁸¹: Այդ է ցույց տալիս ոսկեհանքի շրջանի Կարալա (Κάβαλλα) անունը: Այս տեղանվան հետ իր հիմքով նույնական է Արգիշտի I-ի (մ. թ. ա. 786-764 թթ.) հիշատակած Qabilu(hi) ցեղանունը, որը կրում էր Դիաուխի ցեղամիության (Ճորոխի ավազանում) ցեղերից մեկը⁸²: Ճորոխի ավազանի ոսկու հանքերը՝ Փառանգրոնն ու Բողբերդը (Φαρράγγον, Βώλος), վաղ միջնադարում ևս, ինչպես վկայում է Պրոկոպիոս Կեսարացին, հայտնի էին Հայաստանի սահմաններից դուրս⁸³: Նույնը կարելի ասել նաև Գալլ գետի ավազանին հյուսիսից հարող Արգիրոկաստրոնի (այժմ՝ Գյումուշխանե, Գյումուշխանե) մասին, որի արծաթի հանքերն ունեին նաև ոսկու երակներ⁸⁴:

*Hauil-ija տեղանվան *Hauil- հիմքը, ինչպես նշվեց, նույնն է հայերեն խալիդ «դրախտ, բուրաստան»⁸⁵ բառի և Փիսոնի ռոռգած Xavilā երկրի⁸⁶ անվան հետ: Տեղանվան -ija բաղադրիչը հ.-ե. ծագումով վերջածանց է՝ խեթերի կողմից կիրառված նաև որպես տեղանվանակերտ (հմմտ. հայ. -ի նույնածագում վերջածանցի նույնպիսի կիրառումները): Որպես տեղանվանակերտ՝ այն առկա է նաև Arnija, Arzija, Tepurziia, Zanzaliia և ուրիշ բազմաթիվ տեղանուններում⁸⁷: Խաւ-իդ, Hau-il-ija, Xavilā, բառերում առկա -il- վերջածանցը ևս հնդեվրոպական ծագում ունի (հմմտ. հայ. տորմ-իդ, բավ-իդ, տես-իլ, կաթ-իլ և այլն)⁸⁸:

Բացահայտված չէ միայն այս բառերում առկա խաւ արմատի ծագումը, բայց ակնհայտ է բուսական աշխարհի հետ նրա առնչությունը: Խաւ նշանակում է «աղվամազ, պտուղի վրայի բարակ աղվամազը» (նաև «կերպասի վրայի բարակ թավությունը»⁸⁹) և որպես առաջին բաղադրիչ՝ առկա է այնպիսի բուսանուններում ինչպիսիք են խաւարծի «որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ», խաւարծիլ/խավարծիլ «գարծիլ, խաշնդեղ, որթի մատղաշ ծիլ», «վայրի վարունգ», խաւարտ «կանաչեղեն, ուտելի բանջար», «վարունգ, կաղամբ», նաև հայերենից փոխառյալ մի շարք բառեր կովկասյան լեզուներում, որոնց մեջ կան նաև «անթառամ ծաղիկ» նշանակություն ունեցողները⁹⁰: Խաւարծի բառի

⁸⁰ Ս տ ր ա ր ք ն ն, էջ 121: Հմմտ. Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 25,52.

⁸¹ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Երևան, 1944, էջ 26, 43, Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, էջ 279, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 245:

⁸² Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи. М., 1960, ¹ 128; Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 73.

⁸³ Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 40, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 51:

⁸⁴ «Աշխարհացոյց», էջ 39, Գ. Ս ր վ ա ն ձ ա յ ա ն ց, Երկեր, հ. II, Երևան, 1982, էջ 340:

⁸⁵ ԲՀ, էջ 142:

⁸⁶ Օնն., Բ, 11:

⁸⁷ ВПХИ, с. 67, стр. 167; Ա. Ք ո ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (բառ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 41, 42, 97, 102:

⁸⁸ ՀԼՊԼԺ, էջ 232-233:

⁸⁹ ՀԱԲ, հ. II, էջ 350-352:

⁹⁰ Նույն տեղում:

հնչյունական տարրերակներն են ներկայացնում «ժանգառագույն շուշան, լատին. verbena» նշանակող խօրժի/խաւրժի, խօրճի/խաւրճի բառերը⁹¹ (դրանցում միջնաձայն ա-ի անկման տեսանկյունից հմնտ. աշկերտ, բաղնիք, հարսնիք, մատնիք և այլն): Այսպիսով, Փիսոն գետի ռոռգած Խավիլա երկիրը տեղադրվում է Գայլ գետի ավազանում, իսկ նրա Xavilā անունը հնդեվրոպական ծագումով ածանցյալ բառ է՝ նույնական հայերեն խաւիղ՝ «դրախտ, բուրաստան», բառի հետ:

Դրախտային Xavilā-ի հարևան Քուշը Ճորոխի ավազանում տեղադրված լինելու օգտին է, կարծես, վկայում այստեղ ևս դրախտային այգու հիշատակը պահպանված լինելու իրողությունը: Խոսքը Տայքի Պարտեզ անունը կրած բնակավայրի և Պարտիզագ-փոք («պարտեզների ձոր») անունը կրած գավառի⁹² մասին է: Դրանց մեջ Ղ. Ալիշանը տեսնում էր աստվածաշնչային Դրախտի վերհուշը⁹³: Գավառանվան հիմքում ծագումով իրանական պարտեզ բառն է թափանցած նաև ուրիշ լեզուներ: Դրանցից մի քանիսում իր սովորական նշանակությունից բացի, բառը նաև «դրախտ» իմաստն է ունեցել: Հմնտ. լատին. paradisus «պարտեզ, երկրային կամ երկնային դրախտ», ֆրանս. paradis, իտալ. paradiso «դրախտ», արաբ. firdaus «ծառաստան, պարտեզ, դրախտ»⁹⁴: Իմաստի տեսանկյունից Պարտեզ և Պարտիզագ-փոք տեղանունները կրկնություններն են իւթական արձանագրությունների Խավիլիյա (<խավիղ «դրախտ, բուրաստան») տեղանվան և դրախտային Խավիլա երկրանվան: Դրանք կարող են լինել այդ աշխարհագրական վայրերի ավելի հին անունների հետին իմաստային համարժեքները:

Աստվածաշնչյան Քուշ երկրի Ճորոխի ավազանում տեղադրության մասին է խոսում նրա անունը ևս, որը հակադրամիասնական զույգ է կազմում Գայլ գետի վերնագավառն զբաղեցրած իւթական արձանագրությունների Թումանա երկրի անվան հետ: Մեր կարծիքով, այս երկրանունների գոյությունը նույնպես պայմանավորված է եղել դրանց աշխարհագրական դիրքով. Քուշը արևելքում Ճորոխի ավազանում (աշխարհի լուսավոր կողմում), իսկ Թումանան՝ արևմուտքում՝ Գայլ գետի ավազանում (աշխարհի խավար կողմում):

Աստվածաշնչյան Քուշ երկրի անվան հետ ուղղակի կապի մեջ է հայերեն բարբառային քուշ «կրակարան» բառը (որից՝ քշեզեր «կրակարանի եզերքը, ավերքը», քշեձայր «քուշի՝ կրակարանի, ծայրը»)՝ կիրառված նաև «տան այն բաժանմունքը, որտեղ գտնվում է թոնիրը»⁹⁵ նշանակությամբ: Իմաստով նրան են հարում Ճորոխի ավազանն զբաղեցրած երկրի (ցեղամիության, նահանգի) սեպագրային և մեսրոպատառ անունները: Ասորեստանյան արձանագրություններում երկրանունը վկայված է Dajāeni (<*Daja-eni), իսկ ուրարտական սեպագիր արձանագրություններում՝ Diauḫi (<*Dia-uḫi) տեսքով⁹⁶: Իրենց հիմքով

⁹¹ ՀԱԲ, հ. II, էջ 434:

⁹² «Աշխարհացոյց», էջ 77, 110:

⁹³ Ղ. Ա լ ի շ ա ն. Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 10:

⁹⁴ ՀԱԲ, հ. IV, էջ 69-70:

⁹⁵ ՀԲԲ, հ. IV, էջ 581, 582, 587:

⁹⁶ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту, с. 70-71.

նույնական այս անունները խոսում են հնագույն հայերենի ինչ-որ բարբառում գործած -ai-/-i- հնչյունական համարժեքության մասին: Լեզվական նույն օրինակափոխության մասին են խոսում նաև հետևյալ բառերի և տեղանունների զույգ տարբերակները. խայթ/խիթ, ծայր/ծիր, վայթել/վիթել, վայրագ/վիրագ, Գոբայթ/Գոբիս, Կուսայրի/Կուսիրի: *Dajā/*Dia- զույգի առնչությամբ ուշագրավ է «Բառգիրք հայոցում» բերված դրանց համարժեքները. «Տիք եւ Տայք - խորխոր կոչին»⁹⁷:

Կասկած չի կարող, որ Տի(ք)-ը Dia-ի, իսկ Տայ(ք)-ը Dajā-ի նույնարմատ համարժեքներն են (սեպագրության դարաշրջանի հայերենում դեռևս տեղի չէր ունեցել d>t անցումը): Ուրեմն, այս երկրանվան dia-Լոի հիմքը կարելի է առնչել տի/տի «օր, ցերեկ, օրվա լույս մասը» բառին և նրա նման բխեցնել հ.-ե. *dei- «փայլել, լուսավորել» արմատից. հմմտ. նույնարմատ բառերից հին հնդկ. divyati «լուսավորել», divasa լատին. dies, կիմր. diw, ռուս. ԴավՖ «օր» և այլն⁹⁸: Dajāeni//Diauhi//Տայք երկրանվան «լուսավոր» ստուգաբանության օգտին կարող է վկայել նաև «այծային» ստուգաբանությամբ անուն կրող Ճորոխ գետի ավազանում նրա գտնվելու իրողությունը, որովհետև վաղհնդեվրոպական *DY//h.-ե. *dei- արմատին են ի վերջո հանգում թե՛ հայերեն տիկ՝ նախապես «այծ», թե՛ տի/տի «օր, ցերեկ, օրվա լույս մասը» բառերը⁹⁹: Իմաստաբանական այսպիսի կապը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ մեր հենարան նախնիների կողմից «ամպրոպային էակները նախ պատկերացվում են որպես երկու լեռնանման հրեշ կամ որպես վայրի մեծ կենդանիներ, որոնք կոչվում են իրար հետ՝ գլուխ-գլխի և եղջյուր-եղջյուրի խփելով: Նրանց եղջյուրները կամ թրերն իրար հարվածելուց փայլատակում են և որոտում... Այնուհետև նրանք ավելի որոշակիորեն ըմբռնվում են որպես արջառ (կով) կամ խոյ (այծ)»¹⁰⁰:

Կայծքարի միջոցով կրակ ստանալու գաղտնիքը, ըստ հայկական ավանդազրույցների, մարդիկ սովորել են սատանայից¹⁰¹, որի պատճառով «Աստված զայրանում է սատանայի վրա՝ կրակի գաղտնիքը մարդկանց հայտնելու համար... Եվ Աստված ստեղծում ու երկիր է ուղարկում կայծակին»¹⁰²: Թե ինչպիսին էր վերջինիս վերաբերյալ նախնական պատկերացումը, ցույց է տվել Մ. Աբեղյանը՝ գրելով. «Կայծակն սկզբնապես ընկալվել է իբրև սոսկ քար կամ քարե զենք: Այսօր էլ դեռ անիծում են հետևյալ բառերով. «Աստված գլխիդ քար գցի», և քար ասելով հասկանում են կայծքարը»¹⁰³: Ուրեմն, մարտնչող եղջերավոր անասունները պետք է պատկերացվեն իրար բախվող երկու կայծքարի

⁹⁷ ԲՀ, էջ 314: Խորխոր-ը գործածված է «խորագույն» նշանակությամբ, որովհետև Տայքը VI դ. վերջից հայտնի էր նաև Խորագույն Հայք անունով: Բառակազմության տեսանկյունից հմմտ. խորխորատ և բարբառային խորխորանք բառերը (ՀԱԲ, հ. II, էջ 404, 405):

⁹⁸ ՀԱԲ, հ. IV, էջ 403, 410:

⁹⁹ Н. В. Андреев. Раннеиндоевропейский праязык. Л., 1986, с. 86-87.


¹⁰⁰ Մ. Աբեղյան. Երկեր, հ. VII, Երևան, 1975, էջ 66:

¹⁰¹ Ա. Ղազարյան. նշվ. աշխ., էջ 410, 411:

¹⁰² Նույն տեղում, էջ 410:

¹⁰³ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., հ. VII, էջ 74:

նման, որի պատճառով էլ առասպելական հրեղեն քոշը ժայռապատկերներում հաճախ է ներկայացված սուր ծայրերով իրար ուղղված եռանկյունիներ հիշեցնող մարմնով (տե՛ս նկարը)¹⁰⁴:



Հրեղեն քոշը

Կայծքարի և այծի առասպելաբանական կապի մասին է խոսում նաև «գիշատիչ գազան»/«եղջերավոր անասուն» հակադրումն արտացոլող գալլախազ բառը, որի իմաստը «կայծքար» է¹⁰⁵, բայց բառացիորեն նշանակում է «գալլ պատառտտող կամ նաև՝ գալլերին հրկիզող» («կայծակի խորհրդանիշ կայծքարն ու հրահանր, հատկապես երբ կայծ են արձակում, գալլերից պաշտպանվելու միջոց են»)¹⁰⁶: «Կրակ» և «այծ» (առհասարակ «եղջերավոր անասուն») հասկացությունների սերտաճման մեջ կայծակի խորհրդանիշ կայծքարի հանդես գալը՝ որպես առասպելաբանական միջնորդի, բացահայտում է, օրինակ, հայ ժողովրդական «Բնքը՝ էծ, մեջքը՝ պեծ» հանելուկը, որը վերաբերում է ինչպես ամպրոպ-կայծակի երևույթին¹⁰⁷, այնպես էլ՝ կայծքարին¹⁰⁸:

Վերոբերյալը հիմք է տալիս ծագումնաբանական փոխադարձ կապի մեջ դիտարկելու նաև Քուշ երկրանվան հետ նույնական քուշ «կրակարան» և

¹⁰⁴ Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Հ. Բ ու ր ա յ ե լ յ ա ն. Գեղամա լեռների ժայռապատկերները.- Հայաստանի հնագիտական հուշարձանները, 6, Ժայռապատկերներ, պրակ II, Երևան, 1971, նկ. 150: Հ. Մարտիրոսյանը, երկու եռանկյունիներից կազմված այծանշանի առկայությունը փաստելով մ. թ. ա. III հազարամյակի ժայռապատկերներից սկսած մինչև հայկական ուշ շրջանի մեհենագրեր (որպես «փայլակն» գաղափարագիր), ավելացնում է, որ «այս նշանը հինգ հազար տարվա ընթացքում չի փոխել ոչ ձևը, ոչ իմաստը: Միայն կանգնեցվել է գլխի վրա, ինչպես ուրարտականը» (Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հայաստանի նախնադարյան նշանագրերը, Երևան, 1973, էջ 22):

¹⁰⁵ ՀԲԲ, հ. I, էջ 410, հ. II, էջ 378, հ. IV, էջ 8:

¹⁰⁶ Մ. Ա ր ե ղ յ ա ն. նշվ. աշխ., հ. VII, էջ 92:

¹⁰⁷ Մ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 11, Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 22:

¹⁰⁸ Մ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 20: «Այծ» և «կրակ» իմաստաբանական կապն իր արտացոլումն է գտել նաև այծ և կայծ (<Վ-այծ, որից՝ կայծակն) բառերում: Մրանցից երկրորդը կ- նախահավելվածական բաղաձայնով ներկայացնում է նույն լայծ բառը, որի հնդեվրոպական ազգակիցներն ունեն ինչպես այդ նախահավելվածական բաղաձայնով, այնպես էլ առանց դրա ձևեր. հմնտ. ոռու. коза «այծ», այբան. keth, kedhi «ուլ, այծիկ», հին հնդկ. ajá- «արու այծ», միջ. պարս. azak «այծ», լիտվ. ožka «այծ» և այլն (Этимологический словарь русского языка, т. II, вып. 8, М., 1982, с. 187; ИЯИ, т. II, с. 585; ՀԱԲ, հ I, էջ 169):

քաւշ//քօշ «արու այծ» բառերը: Վերջինիս սեմական ծագման տեսակետը հիմնավոր չի կարելի համարել հետևյալ պատճառներով: Նախ՝ փոխատու համարված ասորերեն *kewšā* բառը ոչ թե «արու այծ», այլ «խոյ, ոչխար» է նշանակում, ապա՝ սեմական մյուս լեզուների համապատասխան բառերը թե՛ իրենց նշանակությամբ, թե՛ իրենց հնչյունական տեսքով ավելի հեռու են հայերեն բառից¹⁰⁹, վերջապես՝ ասորերենից փոխառյալ բառերում առկա *-ā-* այ համապատասխանությունը (հմմտ. ծառայ, սատանայ, քահանայ և այլն) այս դեպքում բացակայում է: Մեր կարծիքով, քաւշ//քօշ բառը կազմված է հնդեվրոպական ծագումով քաւ արմատից և -շ աճականից կամ վերջածանցից: Արմատի համար հմմտ. հ.-ե. **keu-/*ku-*, որից ծագում են ազգակից լեզուների մի շարք բառեր. հմմտ. լատին. *cūdo* «խփում եմ, թակում եմ» (-*d*-ն աճական է), իռլ. *cuad* «խփել, կռվել», լիտվ. *kauti* «խփել, սպանել», *kovà* «պայքար, մրցում» և այլն¹¹⁰: Քաւշ բառում առկա -շ աճականի կամ վերջածանցի համար հմմտ. լպիրշ, գոլորշ-ի, բոլոր-շի, խարշ-ել և այլն¹¹¹: Հնդեվրոպական նույն արմատի կարճ ձևից -շ և -տ աճականներով ունենք քշտել և քշտան բառերի քուշտ հիմքը: Այս բառերից առաջինը նշանակում է նաև «խփել, ծեծել», «հարու տալ, պոզահարել», իսկ երկրորդը՝ «զարկան անասուն»¹¹²:

Գալլ գետի վերնագավառն զբաղեցրած Թումանա/Tummanna¹¹³ երկրի անունը, մեր կարծիքով, կազմված է հ.-ե. **tom-(*tem-)* արմատից և *-ana* տեղանվանակերտ վերջածանցից: Հայերենում այս վերջածանցով կազմված բազմաթիվ բառեր և տեղանուններ ունենք: Դրանցից են. բերան, գերան, գլան, դերձան, կոան և այլն¹¹⁴, Ալեւան, Դերջան, Երեւան, Սեւան և այլն: Թումանա երկրանվան արմատակից բառերից են. «Թումնի - խաւար», «Թումնանալ - խաւարիլ»¹¹⁵ և թմաթ (<թում-աթ, վերջածանցի համար հմմտ. արծաթ, երկաթ): Թմաթ նշանակում է «ծարիր, ծարրաքար»¹¹⁶, այսինքն՝ «դյուրահալ պարզ մե-

¹⁰⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 605:

¹¹⁰ В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974, с. 162. Արու այծերի մենամարտի ընթացքում եղջյուրների բախումից կայծեր են թռչում, և չկնոց է լսվում, ինչպես դարբինների աշխատանքի ժամանակ (հիշենք «դարբին»/«անպրոպային էակ» և «դարբին»/«կրակ» առասպելաբանական գուգորդումները): Ուստի, հնդեվրոպական մի շարք լեզուներում հիշյալ **keu-/*ku-* արմատից ծագած բառերը վերաբերում են նաև դարբնությանը. հմմտ. լատին. *cūdo* «կռել, կռվել, մետաղ մշակել», լիտվ. *kaūti* «կռվել», *kūjis* «մեծ մուրճ», ռուս. *ковка* «դարբնի քուրա», *кузнец* «դարբին», չեխ. *kováč* «դարբին» (նույն տեղում, էջ 159, 162-163, Этимологический словарь русского языка, т. II, вып. 8, с. 179): Թերևս նույնարմատ **kaual-/*kauil-* «դարբնի քուրա», «դարբին» բառերն են առկա Ճորոխի ավազանի ոսկեհանքի Κάβαλλα անվան և Դիաուխի գեղամիության Qabiluhī գեղանվան մեջ. *Qabil-/*kaul-*, իսկ վերջածանցի համար հմմտ. հնդեվրոպական ծագումով վաղնջահայերեն **-elo-/*-ilo-* վերջածանցը (ՀԼՊՆԺ, էջ 232-233):

¹¹¹ ՀԱԲ, հ. II, էջ 306, 347:

¹¹² ՀԱԲ, հ. IV, էջ 585, ՀԲԲ, հ. IV, էջ 582:

¹¹³ ВПХИ, с. 72-73.

¹¹⁴ ՀԼՊՆԺ, էջ 234, 354, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Երևան, 1975, էջ 93:

¹¹⁵ ԲՀ, էջ 123:

¹¹⁶ Հ. Մ. Ք ա ղ ո ն ի. Բարգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, հ. III, Վենետիկ, 1892, էջ 80:

տաղական այն նյութը, որը գործածվում է նաև աչքերը և հոնքերը սև ներկելու համար»¹¹⁷: Այս բառերի արմատն իր տարբերակներով առկա է ազգակից լեզուների այնպիսի բառերի հիմքում, ինչպիսիք են հին հնդկ. *támas*, ավեստ. *tōmah* «խավար», հին իռլ. *temel* «մթություն», լիտվ. *tamsa* «խավար», լատիշ. *tīma*, ռուս. *тьма* «մթություն» և այլն¹¹⁸: Իմաստի առումով Թումանյա երկրանվան կրկնորդն է խեթական արձանագրություններից հայտնի մեկ ուրիշ երկրանուն՝ *Dankuša*-ն: Նրա տեղադրության վերաբերյալ տարակարծությունները (ուրթ տարբեր տեսակետներ) նկատի առնելով՝ Ա. Քոսյանը գրում է. «Տեղադրությունը Գայլ գետի միջին հոսանքների շրջանում առավել հավանական տարածք է»¹¹⁹: Իսկ *Dankuša* երկրանվան միակ ստուգաբանությունը այն բխեցնում է խեթերեն *dankui* «մութ, խավար» բառից¹²⁰: Մա տեղական անվան խեթերեն թարգմանության տպավորություն է թողնում: Գայլ գետի վերին և միջին հոսանքների շրջանը խեթերը մթին, խավար կողմ չէին կարող ընկալել, որովհետև գտնվում էր իրենց բուն երկրից հյուսիս-արևելք, այսինքն՝ աշխարհի սրբազան այն մասում, որտեղ ամառային արևադարձային օրը ծագում էր խեթական աշխարհի արևը:

Գայլ գետի ավազանում գտնված երկրների Թումանյա և Դանկուվա անունների «խավար, մթին» ստուգաբանությունը, հաստատելով մեր հեռավոր նախնիների մտապատկերում աստվածաշնչային Փիսոնի (Գայլ գետ) ավազանի խավար կողմ ընկալված լինելու իրողությունը, մինևույն ժամանակ ենթադրում է հակադիր Գեհոնի (Ճորոխ) ավազանի լուսավոր կողմ ընկալված լինելու հանգամանքը: Իսկ դա նա, ինչպես տեսանք, որպես իրողություն հաստատվում է Գեհոն//Ճորոխի ավազանում գտնված հնագույն Քուշ, Դայաե-նի//Դիաուխի («Տիք և Տայք») երկրանունների «լուսավոր» ստուգաբանությունների միջոցով:

К ЛОКАЛИЗАЦИИ РАЙСКИХ РЕК И СТРАН ХАВИЛА И КУШ

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

В Библии сказано, что река Фисон орошает всю землю Хавила, а река Гихон – землю Куш (Быт., II, 11-15). По нашему мнению, Фисон – это река Гайл-гет//Люкос (нынешний Келкит), а Гихон – Чорох. Эти потамонимы являются антонимами, т. к. *Гайл-гет* означает “*Волк-река*”, а *Чорох* – “*Козел-источник*”. Антонимами мифологическо-этимологического характера являются также потамонимы *Фисон* и *Гихон*, а также *Диклат* (древнее название реки Тигр) и *Бурунун* (древнее название Евфрата). Первый из последних потамонимов этимологизируется как “Козел-река”, а второй – как “Гиена-вода”. Так как бассейн Евфрата находится западнее бассейна Тигра, то и

¹¹⁷ ՀԱԲ, հ. II, էջ 189, ՀԲԲ, հ. II, էջ 112, 332:

¹¹⁸ М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Т. IV, М., 1973, с. 133-134.

¹¹⁹ Ա. Ք ո ս յ ա ն. *նշվ. աշխ.*, էջ 95-96 և կից քարտեզը:

¹²⁰ Նույն տեղում, էջ 96:

здесь налицо мифологическое противопоставление хищника–рогатому, запада–востоку. Страна Хавила была расположена в бассейне реки Фисон//Гайл-гет, а страна Куш – в бассейне Гихон//Чороха. Как упомянутые райские потамонимы, так и хоронимы *Хавила* и *Куш* индоевропейско-армянского происхождения. Для *Хавила* ср. ойконим *Хавилия* хеттских источников (локализуется в бассейне Гайл-гет) и арм. *хавил* (*խավիլի*) “рай, цветущий луг”, а для *Куш* ср. арм. *куш* (*քուշ*) “очаг, топка”.

TO THE LOCALIZATION OF THE RIVERS OF PARADISE AND THE COUNTRIES OF
HAVILAH AND KUSH

SARGIS PETROSYAN

S u m m a r y

Potamonims *Pison* and *Gihon* (Bible, Gen., II, 11-15) like *Burunun* (Greek Euphrates) and *Diglat* (Greek Tigris), are etymological antonyms. They reflect the mythological opposition of the beast of prey to the horned cattle, of the West to the East. The country of *Xavilā* (Havilah) is situated in the river basin of *Pison* (Arm. *Gayl-get*, Turk. *Kelkit*) and the country of *Kush* – in the river basin of *Gihon* (Arm. *Chorokh*, Turk. *Coruh*). All these geographical names are of Indo-European-Armenian origin. For *Xavilā* cf. toponym *Haviliya* of Hittite inscriptions and the Armenian word *խավիլի* “paradise, blooming meadow”, and for *Kush* cf. the Armenian word *քուշ* “frazier, stove”.